*Հավելված N 2*
*ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/22-ՀՆՆ ծածկագրով գնման*
*ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի*
*2026թ.-ի հունիսի 11-ի N 1.1 արձանագրության*

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**հրավերում փոփոխություններ կատարելու մասին**

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2026թ.-ի հունիսի 11-ի N 1.1 արձանագրությամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

**Ընթացակարգի ծածկագիրը՝ ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/22-ՀՆՆ**

ՀՀ ազգային անվտանգության ծառայության կարիքների համար հատուկ նպատակային այլ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/22-ՀՆՆ» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերում կատարված փոփոխության պատճառները և կատարված փոփոխությունների համառոտ նկարագրությունը՝

**Փոփոխության առաջացման պատճառ:** Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրում՝ 68-րդ չափաբաժնի մասով տեղի է ունեցել վրիպակ, որի արդյունքում նշյալ չափաբաժնի մասով ներկայացված տեխնիկական բնութագիրն անհրաժեշտ է փոփոխել և ներկայացնել նոր խմբագրությամբ:

**Փոփոխության նկարագրություն:** Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրում՝ 68-րդ չափաբաժնի մասով ներկայացված տեխնիկական բնութագիրը փոփոխվել և ներկայացվել է նոր խմբագրությամբ, հետևյալ կերպ.

«Յուղաներկ 1-3 կգ չափածրարավորված, մետաղյա տարաների մեջ: Կախված բաղադրության մեջ մտնող թաղանթագոյացնող նյութից յուղաներկերը բաժանվում են. ցինկի շպար, լիթոպոնային շպար, գունավոր ներկեր, երկաթի սուսրի, մումիայի, օքրա: Նախատեսված են շենքների արտաքին և ներքին հարդարման աշխատանքների (բացառությամբ հատակի ներկման), ինչպես նաև մետաղյա և փայտյա իրերի ներկման համար: Յուղաներկերում թաղանթագոյացնող նյութի զանգվածային մասը պետք է լինի 20%-ից մինչև 34%, պայմանական մածուցիկու¬թյունը՝ ըստ B 3- 4 մածուցիկաչափի (20˚0,5) ՛C, 65-160 վ, սև-RAL 9005-100կգ, մոխրագույն-RAL 7004-1000կգ, կարմիր-RAL 3000-200կգ, կանաչ-RAL 6001-500կգ, դեղին-RAL 1003-200կգ ՝ փայլուն և սպիտակ-RAL 9003-1000կգ ՝ առանց փայլի, գույների և քանակների: Յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ-ում արտոնագրված կազմակերպության կողմից տրված նշված ապրանքատեսականու բաղադրության և որակի վերաբերյալ լաբորատոր հետազոտության հավաստագիր: Պահպանման ժամկետը մատակարարման պահից ոչ պակաս քան 2տարի:»:

**Փոփոխության հիմնավորում:** «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/22-ՀՆՆ ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Վ. Վարդանյանին:

Հեռախոս՝ (+374) 98 389689 (ներքին հեռախոսահամար՝ 08)
Էլ. փոստ՝ v.vardanyan@promotion.am
Պատվիրատու՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայություն